ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար <<Երևանի կամերային պետական թատրոն>> ՊՈԱԿ-ին ամրացված տարածքում շինության կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/14Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2015 թվականի օգոստոսի 13-ին կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/14Հ պայմանագրում 2017 թվականի դեկտեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Պայմանագրի կատարման համար լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության նկարագրություն	ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 1616-Ն որոշմամբ <<Երևանի կամերային պետական թատրոն>> ՊՈԱԿ-ին ամրացված տարածքում շինության կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/14Հ ծածկագրով պայմանագրի կատարման համար հատկացվել է լրացուցիչ ֆինանսական միջոց և պայմանագրի 7.3 կետի համաձայն կնքվել է համաձայնագիր:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.3 կետը և կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 1616-Ն որոշումը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

/ 13.08.2015 թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/14Հ պայմանագրի/

ք. Երևան 20 դեկտեմբերի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՆՍԹ ԱՐՔԻԹԵՔՉՈՒՐ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ի. Ներսիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության և <<ՆՍԹ ԱՐՔԻԹԵՔՉՈՒՐ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ի միջև 13.08.2015թ. կնքված <<Երևանի կամերային պետական թատրոն>> ՊՈԱԿ-ին ամրացված տարածքում շինության կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/14Հ գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը և ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 14-ի N 1616-Ն որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին

1.1.1 Ավելացնել Պայմանագրի 11.04.2017թ. կնքված N 2 համաձայնագրի գինը 182 700 (մեկ հարյուր ութսուներկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամով և սահմանել 654 200 (վեց հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

1.1.2 Պայմանագրի 4.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<4.1.1 Պայմանագրի ընդհանուր գնից մինչև 182 700 (մեկ հարյուր ութսուներկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամի չափով՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է 2017 թվականին մատուցվելիք ծառայության գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:>>:

1.1.3 Պայմանագրի 11.04.2017թ. կնքված N2 համաձայնագրի թիվ 1 հավելվածը փոխարինել Համաձայնագրի N1 հավելվածով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի N1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012623, ՀՎՀՀ 02565827	<<ՆՍԹ ԱՐՔԻԹԵՔՉՈՒՐ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ ք. Երևան, Աղայան 7 բն.79 <<Արդշինբանկ>> ՓԲԸ Հ/Հ 2478700056720000 ՀՎՀՀ 01565913
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան _____ ստորագրություն	_____Ի. Ներսիսյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N1
2017թ. դեկտեմբերի 20-ին կնքված
համաձայնագիր N 3-ի

<<Հավելված թիվ 1
2015թ. օգոստոսի 13-ին կնքված
N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/14Հ գնման պայմանագրի
2017թ. ապրիլի 11-ին կնքված
համաձայնագիր N 2-ի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր 05)

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	<<Երևանի կամերային պետական թատրոն>> ՊՈԱԿ-ին ամրացված տարածքում շինության կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություն	-	-	47 200	165 000	165 000	165 000	353 600	353 600	353 600	471 500	471 500	654 200	654 200

>>:

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012623, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Մկրտչյան _____
ստորագրություն

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՆՍԹ ԱՐՔԻԹԵՔՉՈՒՐ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ
ք. Երևան, Աղայան 7 բն.79
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2478700056720000
ՀՎՀՀ 01565913

Տնօրեն՝

_____ Ի. Ներսիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.